ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

N 216-Ա

21 ապրիլի 2025 թ.

ՋԱՆԻԿ ԲԱԶԵՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ «TOYOTA CAMRY 2.5» ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ (ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇ՝ 550 LL 55) ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի փետրվարի 18-ի N 163-Ա հրամանը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանին 2025 թվականի ապրիլի 22-ին, մեկ օրով, գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, Սևանա լճի ափամերձ տարածքում գործող հանրային օբյեկտներում կեղտաջրերի մաքրման կայանների ապահովման նկատմամբ վերահսկողության խստացման մեխանիզմների իրականացման վերաբերյալ քննարկմանը մասնակցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված՝ աշխատակազմին սպասարկելու նպատակով հատկացված «TOYOTA CAMRY 2.5» մակնիշի ավտոմեքենայի (նույնականացման համար՝ JTNBF4FK703029402, պետական հաշվառման համարանիշ՝ 550 LL 55) շահագործումը և նյութական պատասխանատվությունը 2025 թվականի ապրիլի 22-ին վերապահել Ջանիկ Բազեյանին:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները՝ վճարելով միայն օրապահիկ:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Մկրտիչ Ղազազյանին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

21.04.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ